ՀՏԴ 929:51(479.25) Անանիա Շիրակացի + 52
Doi:10.54503/0135-0536-2024.3-210

ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ԱՐՈՒՍՅԱԿ ՇԻՐԻՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Անանիա Շիրակացի, փիլիսոփայություն, հավերժություն, անսահմանություն, ժամանակ, ընդանցություն:

Նախաբան

VII դարի հայ մտածող և աստվածաբան Անանիա Շիրակացու փիլիսոփայության մեջ ժամանակի ընկալումն ուներ իր առանձնահատկությունները, և դրա դիտարկումը միշտ չէ, որ մանրամասն կամ համակարգված է եղել՝ համեմատած փիլիսոփայական հետագա ավանդույթների հետ: Չնայած «հելլենիստական ուղղության նշանավոր հայ փիլիսոփան սիրում էր լայն ընդհանրացումներ անել»[1], այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել նրա որոշ դիրքորոշումներ ժամանակի խնդրի վերաբերյալ: Անանիա Շիրակացու՝ ժամանակի ընկալումները կարելի է նկատել անսահմանության և վերջավորության մասին նրա մտորումներում, «չար հեթանոս» փիլիսոփաների և քաղդեացի աստղագուշակների հետ բանավեճերում: Ժամանակի ստորոգույթները հայ մտածողի փիլիսոփայության մեջ ի հայտ են գալիս ընդանցական համատեքստում, որի կարևոր բաղադրիչը ժամանակի ըմբռնումն էր Արիստոտելի փիլիսոփայության մեջ: Այդ դարաշրջանի փիլիսոփայական գիտությունը չուներ ժամանակի երևույթը բացատրելու բավարար միջոցներ և մեծ մասամբ կապված էր ճանաչողական գործընթացների ու տվյալ ժամանակաշրջանի գիտական գործիքակազմի հետ: Այս բարդ երևույթի բացատրության համար առկա է մեթոդաբանական և էմպիրիկ նախադրյալների հնարավորություն:

Չնայած Շիրակացու ժառանգությունը բավականին մանրամասն ուսումնասիրել են բազմաթիվ հետազոտողներ (Վ. Չալոյան[2], Ս. Արևշատյան[3] և այլն), այնուամենայնիվ կփորձենք դիտարկել փիլիսոփայի որոշ աշխատությունները բնազանցական մեթոդաբանության կիրառմամբ, որի հիմնական փիլիսոփայական հարցերը կապված են ժամանակի բնույթի, դրա գոյության և իրականության վրա ազդեցության հետ: Թեև հետազոտության այս մեթոդը հերքում են XX դարի որոշ փիլիսոփաներ (Ուիլյամ Ջեյմս, Ջոն Դյուի[4], Մերաբ

---

* *Ներկայացվել է 07. V. 2024 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, փիլ. գ. դ., պրոֆ. Հակոբ Քյոսեյանը (22. IV. 2024 թ.): Ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

[1] Чалоян. 1959, 157.

[2] Чалоян. 1959, 131–157.

[3] *Արևշատյան. 2014, 441–524:*

[4] Кимилев. 2014, 36–39.

Մամարդաշվիլի[5], *Գեորգի Շչեդրովիցկի*[6] *և այլք), և դրա հաղթահարելու ուղղությամբ ջանքեր են գործադրվում՝ «մետաֆիզիկայի հաղթահարման ծրագիրն օրակարգից չի հանվել, ավելին՝ այն առավել արդիական է, քան երբևէ»*[7], *հարկ է նշել, որ բնագանցական մեթոդը շարունակում է արդիական մնալ ժամանակակից փիլիսոփայության մեջ (Օսվալդ Շպենգլեր*[8], *Դեյվիդ Լյուիս*[9] *և այլք), իսկ այդ մեթոդի հաղթահարման ուղղությամբ գործադրվող ջանքերը չեն նշանակում դրա լիակատար մերժում:*

Ժամանակի ընկալումը «Տիեզերագիտական» և «Տոմարագիտական» աշխատություններում

Հայտնի է, որ Ա. Շիրակացու վրա մեծ ազդեցություն է թողել Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայությունը: «Տիեզերագիտությունը» գրելիս փիլիսոփան հիմնականում օգտվել է Բարսեղ Մեծի «Վեցօրեայք» և Կեղծ Արիստոտելի «Յաղագս աշխարհի» աշխատությունների հայերեն թարգմանություններից, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց», Եղիշեի «Մեկնութիւն Արարածոց», ինչպես նաև Փիլոն Ալեքսանդրացու «Յաղագս նախախնամութեան», «Վասն լինելութեանն», «Լուծմունք ելից», «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» և Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրութիւն» երկերից[10]*: Ժամանակի երևույթի հայեցակարգային հիմքերը Շիրակացու աշխատություններում՝ հնարավոր չէ հասկանալ նախաբանական (աշխարհի և մարդու արարման ուսմունք) և վախճանաբանական նախադրյալներից դուրս:*

Այսպիսով՝ ուսումնասիրելով անտիկ փիլիսոփայության և քրիստոնեական աստվածաբանության փոխներհյուսումը Շիրակացու աշխատություններում՝ կփորձենք բացահայտել հայ փիլիսոփայի՝ ժամանակի ընկալման հիմնական հայեցակարգերը:

Շիրակացու ժամանակի հայեցակարգը պետք է դիտարկել անվերջություն և վերջավորություն հասկացությունների ծիրում՝ կապված շարունակականություն հասկացության հետ: Դրանք փոխլրացնում են միմյանց. անսահմանությունն ունի անչափելիության, իսկ շարունակականությունը՝ անընդհատության հատկություն. գոյաբանության մեջ այս հասկացությունները հիմնարար են: Հայ փիլիսոփան դրանց անդրադարձել է երկնքի և երկրի վերջավորության ու անվերջության հայեցակարգերի վերաբերյալ անտիկ պատկերացումներին հակաճառելիս (ենթադրաբար՝ Պարմենիդեսի և Զենոն Էլեացու[11] *բանաձևերին, որոնք անսահմանը համարում էին չձևավորված ու անկատար): Շիրակացու ընկալումները, ըստ էության, հակադրվում են նաև երկնքի*

[5] Мамардашвили. 1992, 282.

[6] Щедровицкий. 2004, 19–25.

[7] Канке. 2014, 139.

[8] Шпенглер. 1993, 552.

[9] Lewis. 1986. 3, 9.

[10] Аревшатян. 1976, 205–252.

[11] *Պարմենիդեսը ճանաչում էր աշխարհի հավերժությունը ժամանակի մեջ և նրա անսահմանությունը տարածության մեջ: Զենոն Էլեացին հերքում էր Տիեզերքը ծնած առաջնային նյութի գաղափարը* (Асмус. 1976, 53–57, 139–143)*:*

ու տիեզերքի հավերժական շրջանաձև շարժման արիստոտելյան բանաձևին, ըստ որի՝ տիեզերքը ժամանակի մեջ չունի ո՛չ սկիզբ, ո՛չ ավարտ[12]*:*

Քննադատելով այս դիրքորոշումները՝ Շիրակացին առաջարկում է անսահմանի այլ՝ դրական ըմբռնում, որտեղ դրա աղբյուրը իրական հավերժական Աստված է: Անսահմանությունը էականի հատկանիշն է: Երկիրն ու երկինքը ստեղծվել են Աստծո կողմից. արարվածն ու Արարիչը հավասարապես հավերժական չեն. «Որք զերկին եւ զերկիր անսկիզբն եւ անկատար ասացին, որպէս ոք զի տեսանիցէ գիր բոլորակ դրոշմեալ յումէ եւ իցէ. եւ վասն զի ո՛չ էր ինքն ի տեղն, յորժամ հանաւ գիրն բոլորակ. եւ չերեւի թէ ուստի՞ իցէ սկսեալ. եւ կարծիցէ թէ անսկիզբն է: Բայց պարտ է նկատել մտաւք, եթէ որ եհանն գնա անդէն, արար նմա սկիզբն. եւ նոյն բովանդակեաց գնա կատարմամբ»[13]*: Այս պնդման մեջ նկատելի են ժամանակացույց և վախճանաբանական նախադրյալներ. ընդգծվում է աստվածային միջամտության գաղափարը պատմության և տիեզերքի համար նախագծված աստվածային ծրագրի իրագործման մեջ՝ հօգուտ մարդու: «Ամենայն արարածքս առ ի յաւգուտ մարդկան եղեն ըստ բարերարութեան եւ մարդասիրութեանն Աստուծոյ. զի որպէս պատճառք ճշմարիտ արարչութեանն՝ նոյնպէս եւ անսխալ մատակարարութեանն»*[14]*:*

Վաղ քրիստոնեական փիլիսոփայության առանցքում աստվածաբանական և էթիկական խնդիրներն էին, սակայն Շիրակացու փիլիսոփայությունը շոշափում է չորս տարրերի շարունակականության թեման, որը նրա համար հիմք է հանդիսացել բնության և նյութի բացատրության համար: Չորս տարրերի՝ կրակի, ջրի, օդի և հողի Արարիչը (Աստված) օժտել է նրանց բնորոշ հատկանիշներով և սահմանել դրանց բնական զարգացումը. դրանք միասին կազմում են նյութական աշխարհը: Այս չորս տարրերից յուրաքանչյուրն ունի իր բնորոշ հատկանիշները, բայց, ի լրումն դրանց, յուրաքանչյուրն ուներ համապատասխան քաշ և խտություն, որոնք նույնպես պետք է համարել անբաժանելի հատկանիշներ: Տարրերի միացումը, երբ մեկը սահուն վերածվում է մյուսին՝ բնական կերպով խառնվելով, կազմելով մեկ ամբողջություն, բացատրում է բնական մարմինների և երևույթների առաջացումը, գոյությունը, աճը, նվազումն ու քայքայումը, որոնք, ըստ Շիրակացու, տեղի են ունենում առանց Աստծո միջամտության[15]*: Նրա պնդմամբ, Անշարժ Շարժիչը՝ շրջանաձև շարժումով հավերժ շարժվող էությունը, ստիպել է տարրերին շարժվել. այդ էությունը նա անվանում է Աստված, որը ժամանակի ընթացքում չի միջամտում իրերի զարգացման բնական ընթացքին և գամված չէ շարունակականությանը, տարրերի միաձուլման շարունակական գործընթացին, ունակ է հեռանալու դրանից, և այդ հեռավորությունն առաջանում է որպես ժամանակ ու տարածություն: Եվ եթե ատոմիստները (Լևկիպոս, Դեմոկրիտես) պնդում էին, որ այս չորս տարրերն ամբողջ տիեզերքում ներկայացված են տարածությամբ և նյութով, ապա հայ փիլիսոփան տարածության ու նյութի տարբերակումը սահմանափակեց երկինքներով: Չորս տարրերը կատարյալ չէին արարված,*

---

[12] Аристотель. 1981, 266.
[13] *Շիրակացի. 2005, 713:*
[14] *Շիրակացի. 2005, 730:*
[15] Hewsen. 1992, 276.

սակայն կարող էին փոփոխվել և բարելավվել. «... եւ ունին խառնուածս միաբանութեան առ միմեանս հաղորդութեամբ: Եւ է հրոյ բնութիւն՝ ջերմ եւ ցամաք: Եւ աւդոյ բնութիւն՝ ջերմ եւ խոնաւ: Եւ ջրոյ բնութիւն՝ խոնաւ եւ ցուրտ: Եւ հողոյ բնութիւն՝ ցուրտ եւ ցամաք: Եւ ի հաղորդելն ընդ միմեանս՝ առնուն եւ ի բնութենէ միմեանց»[16]: Շփման ժամանակ տեղի է ունենում որակների փոխանցում. օրինակ՝ խոնավ օդը կարող է չորանալ: Տարրերի բնական խառնումը թույլ է տալիս դրանց ձևավորել մեկ ամբողջություն, ինչը հնարավոր է դարձնում նոր փոխներհյուսություն, որն իր հերթին նպաստում է բնության էլ ավելի մեծ ձևավորումներին և փոփոխություններին. տարրերի վերածննդի ու փոխներհյուսության հասկացությունները ենթադրում են ժամանակի հասկացություններ և դրանց գոյության տևողություն. հետևաբար, արարված տարրերը պետք է ենթարկվեն ժամանակին: Իրենց հերթին՝ տարրերի բազմաթիվ տատանումները կանխորոշում են տիեզերքի ձևավորումը, երկարատևությունն ու անսահմանությունը, մինչդեռ Անանիա Շիրակացու համար ժամանակը շարժման, այլ ոչ թե նյութի հատկանիշ է. բնական փոփոխությունները ժամանակի մեջ անսահման են, բայց սահմանափակ են տիեզերքի մեջ:

Այստեղ խնդիր է առաջանում. առաջին հայացքից այս գործընթացը, որը մատնանշում է բնության մեջ արմատներ ունեցող տարրերի փոխակերպումը, կարող է ցույց տալ տարրերի ձևավորման անսահմանությունը, որտեղ չկան ընդմիջում և ժամանակային դերազանցություն, սակայն, քրիստոնեական ուսմունքի համաձայն, չգոյությունից առաջացած ստեղծագործությունը պետք է ունենա ժամանակային շարքեր՝ որոշակի շարժման սկիզբ ժամանակային հաջորդականության առկայությամբ և գոյության դադարով: Շիրակացու այս դիրքորոշումը համահունչ է Պլատոնի բանաձևին տիեզերքի տարրերի տարբերակման, խառնման և միաձուլման մասին՝ նոր ամբողջականության վերածննդի համար. «Երբ այս տարրերը խառնվում են, որոշ նոր ծնունդներ են առաջանում»[17]: Պետք է հասկանալ և հիշել, որ Պլատոնի աշխարհայացքի հիմքը ժամանակի փուլային պատկերացումն է. «Թիմեոս» աշխատությունում նկարագրված է տարրերի հավերժական համակեցությունը, որտեղ քառսը՝ ուղիղ գծով տարածության մեջ պատահական շարժումների խառնուրդը, նրա կողմից համարվում է իռացիոնալ և անկատար շարժում, իսկ շրջանագծով շարժումը՝ կատարյալ, հարմար բանական էակների համար[18]: Շրջանակին որպես կատարելությանը դրական բնութագրում է տալիս նաև Շիրակացին՝ հղում կատարելով «բարի փիլիսոփաներին», որոնք, հեթանոսներ լինելով, ճանաչում էին Մեկ Աստծուն որպես տիեզերքի Արարչի, և այդ գաղափարն առաջարկում է տրամաբանական մտածողության միջոցով:

Շիրակացու աշխատություններում շրջանակը զուգադրվում է հավերժության և անսահմանության գաղափարի հետ ու արտացոլում Աստծո հատկանիշները. «... եւ բաւական եղեւ մեծատարած շրջան նորա՝ որ պատեաց զամենայն արտաքուստ, ցուցանել զմեծ ծոց փորուածի նորա բոլորակ գնդաձեւ՝ զոր նոքա կատարեալ ձեւ յատիտենական կոչեն՝ շրջագայ անդադար երագութեամբ

[16] Շիրակացի. 2005, 712–713:
[17] Диалоги Платона Тимэй. 1883, 24.
[18] Амстронг. 2006, 59.

անչափելի եւ անթուելի եւ անտեսանելի. միայն իմանալի. ո՛չ ամենեցուն՝ այլ միայն որ զիմանալիսն իմանան. ո՛չ որպէս կամին, այլ որպէս ի գոյացութիւն շրջագայութեան, զոր եւ պրկումն անուանեն»[19]*:*

«Տիեզերագիտական» աշխատություններում քննարկելով քաղդեացի աստղագուշակների տեսակետները, ովքեր կանխորոշում էին նորածնի հետագա ճակատագիրը կենդանակերպի նշաններով, ըստ ծննդյան պահի՝ ընդհուպ վայրկյաններ՝ Շիրակացին կտրուկ դատապարտում է այս դիրքորոշումը. «Եւ թուի ինձ, թէ այլ բազուն ժամք անհամար բոպէիւք անցանեն, մինչ յայց ելեալ խնդրէ աստեղագէտն գտանել զժամ ծննդեան մանկանն, թէ ո՞ր աստեղատանց է տուիչ ժամուն եւ յորո՞ւմ ի մասանց ԲԺ.ան աստեղատանցն երեւեցաւ ժամն նորա, եւ յորո՞ւմ կարգի թուոցն նոցա եկաց ժամն առ ի ճանաչել: Եւ ո՞ր իցէ երագընթաց ժամն առ ի յիւրաքանչիւր Կ. վայրկենեացն, յորոց լինեն Կ.ից Կ. բոպէք, եւ այս ասեն նուրբ եւ առանց հասանելոյ գիւտք անհամար ժամուք ի իւրաքանչիւր աստեղացն որ անուանեալ կոչին մոլորեցուցիչք»[20]*: Պետք է ենթադրել, որ հայ փիլիսոփան դրանում տեսնում է ստատիկ ժամանակի ստորոգությը, որը նախատեսում է անցյալի, ներկայի և ապագայի գոյության միաժամանակությունը՝ այս ստորոգությը ենթարկելով քննադատության. «… եւ ծննդաբաշխն ծննդոցն հաստատեացեն, եւ մեծաւ փութով զոր ունին՝ յանձինս վրիպեցուցեալ ի կորուստ մատնեն զժամսն իւրեանց. քանզի ընդ վայրկենիս եւ ընդ բոպէս յաճախեալ բազմանան ի վերայ նոցա փոփոխմունք ժամուցն եւ աստանդին. քանզի վրիպեալ զարտուղին խորհուրդք նոցա բազմութեամբ երագախաղաց ժամունքն իւրեանց. զի երագութիւն երագափոխան ազգութեանց նոցա յապուշ եւ յիմարութիւն կործանեաց զնոսա, եւ լինելոյ յայպն կատականաց դատարկացոյց մշտնջենաւորութեան ի սնոտիս»*[21]*: Ակնհայտ է նաև, որ այս դատապարտման մեջ Շիրակացին՝ որպես բնական գիտությունների հայոց ավանդույթի հայր, չի ընդունում օբյեկտիվ, բնական ժամանակի բացակայությունը: Ըստ գծային, պատմական հայեցակարգի՝ ժամանակն առաջանում է և գոյություն ունի, ի թիվս այլ բաների, նյութական առարկաների և համակարգերի քանակական ու որակական փոփոխությունների արդյունքում, որոնք կախված չեն մարդու գիտակցությունից. «Արդ եթէ այնչափ անհամար բոպէիւք եւ անչափ եւ վայրկենաւք արագափոխն ժամուց լինիցի ի փոփոխումն կերպարանաց աստեղացն ի բիւրազգի գնացս եւ շրջանս, ո՞րչափ արդեաւք թագաւորք ծնանին հանապազ ի փոփոխմանցն որ լինին ստէպ ստէպ կերպարանաց աստեղացն, ընդէ՞ր ո՛չ հանապազ ծնանէին թագաւորք…»*[22]*: Տվյալ դեպքում Շիրակացին դիտարկում է առաջացման, գոյության և անհետացման հետ կապված ժամանակի փոփոխությունները, այն բնութագրում որպես «խուսափող» և «անցողիկ»*[23] *դրանով իսկ ուրվագծելով ժամանակի գծային ուղղությունը:*

«Լուսնի մասին» գլխում Շիրակացին մատնանշում է ժամանակի ճշգրիտ գնահատման կախվածությունը լուսնային փուլերից. «… իսկ զժամանակս եւ

---

[19] Շիրակացի. 2005, 714:
[20] Շիրակացի. 2005, 726:
[21] Շիրակացի. 2005, 726:
[22] Շիրակացի. 2005, 728:
[23] Аревшатян. 2023, 322.

զաւուրս եւ զտարիս որոշէ եւ սա հանգոյն արեգական. յաւուր՝ քսան եւ չորս ժամս ընթանալով ընդ տիւ ընդ գիշեր, ամիս՝ յընծայմանէ յընծայումն, եւ երիցս կատարելով առնէ տարի, ըստ թուոյ Եբրայեցւոց, որ կատարեն զընթացս տարւոյն 'ի Հիմ կտակարանաց»[24]: Երկնային բոլոր մարմինների պես Լուսինն էլ ենթակա է ձևավորման և ոչնչացման: Այս թեման առանցքային է քրիստոնեության փիլիսոփայական ավանդույթի համար. «Եւ այս ոչ դուշնաքեայ նախախնամութիւն արարողին է՝ զի մի՛ ոք զարարածս տեսեալ առանս ապականութեան՝ զնոսին իսկ արարիչս կարծիցէ. այլ զի հանապազ յերեւելի տարերս վայելեսցէ զերկրաւոր սպասաւորութիւն. եւ զարարիչն ամենայն գոյիցս գեր 'ի վերոյ գիտասցէ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն»[25]: Ըստ երևույթին՝ փիլիսոփան կոնկրետ նպատակով չեշտում է ձևավորման ու կործանման գործընթացը, որը ներառված է վախճանաբանական հեռանկարի և ապոկալիպտիկ կանխագուշացումների մեջ: Ըստ Շիրակացու՝ այս ընթացքը հավերժական է, բայց նաև ցույց է տալիս անցում դեպի անսահման հավերժության վիճակ, որը, անշուշտ, տարբերվում է անտիկ դարաշրջանի փուլային պատկերացումներից՝ ունենալով ելակետ՝ Աստծո ստեղծած «աշխարհի սկզբից» և շարժվում՝ ծագումից մինչև դրա ավարտը: Այս ըմբռնումը կարևորագույն աստվածաբանական իմաստն ունի:

«Արեգակի մասին» գլխում արդեն Շիրակացին մտորում է այն մասին, որ Արեգակի շարժումից կախված են տարվա եղանակների փոփոխությունները և ժամերի տևողությունը՝ հիմք ընդունելով Սուրբ Գրքի առաջին գլուխը. «Եւ Աստուած ասեց. լուսաւորներ լինին երկնքի հաստատութիւնումը, որ ցերեկը գիշերից բաժանեն, եւ նշանների եւ ի ժամանակների, եւ օրերի եւ տարիների համար լինին (Ծննդոց Ա: 14)»[26]: Այստեղ ժամանակը դիտվում է որպես աստվածային կարգի մաս. Աստված ստեղծում է երկնային մարմինները, որպեսզի նրանք ցույց տան ժամանակը: Գործընթացը հաստատում է աստվածային վերահսկողությունը ժամանակի և դրա կառուցվածքի վրա. «... զի այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աշտիճինաց՝ արդար գնացիւք արեգականն շրջանին անցանեն ի վերայ մեր, կարգ ըստ կարգի յաւրինեալ յարդարմամբք ըստ ակնարկելոյ գաւրութեանն որ պատշաճեաց գնոսա յիւրաքանչիւր կարգս եւ 'ի ժամանակս»[27]: Երկնային մարմինների ստեղծումը և դրանց դերը օրերի, գիշերների, ամիսների ու տարիների սահմանման գործում ընդգծում են ժամանակի սերտ կապը տիեզերական կարգի հետ: Ժամանակը դիտվում է ոչ միայն որպես վերացական միջոց, այլ որպես լայն տիեզերական ծրագրի մի մաս, որն ունի հոգևոր նշանակություն՝ ի տարբերություն Արիստոտելի ժամանակի ըմբռնման, երբ ժամանակի ու շարժման փոխհարաբերությունների խնդիրը բնութագրվում է շարունակական թվային հոսքի ձևով, և այս շարունակական շարժումը տեղի է ունենում շրջանագծի մեջ. «Ժամանակը կոչվում է ոչ թե արագ և դանդաղ, այլ մեծ և փոքր, երկար և կարճ: Քանի որ այն շարունակական է, այն երկար է և կարճ, քանի որ այն թիվ է՝ մեծ և փոքր, իսկ արագ և

[24] Շիրակացի. 2005, 760:
[25] Շիրակացի. 2005, 761:
[26] Աստվածաշունչ. 2015, 5:
[27] Շիրակացի. 2005, 762–763:

դանդաղ չի լինում, չէ՞ որ հաշվելու համար օգտագործվող թվերից ոչ մեկը չի կարող արագ կամ դանդաղ լինել»[28]:

Այսպիսով՝ ի հակադրություն հին հունական փիլիսոփայության դասական դարաշրջանի՝ Անանիա Շիրակացու ընկալմամբ՝ ժամանակը շարժումով չափվող փիլիսոփայական վերացական չէ, այլ աստվածային ստեղծագործություն:

Ժամանակագրությունը՝ որպես ժամանակի հաշվման մասին գիտելիք, դրանցով գործառնական հաշվարկներ կատարելու, Զատկի օրերը հաշվելու, թվերը խորհրդանշական կերպով մեկնաբանելու կարողություն է, որը Հայաստանում գոյություն ունի հնագույն ժամանակներից: Ժամանակի հայեցակարգում կենտրոնական տեղ են զբաղեցնում տոմարային համակարգերը, այնուամենայնիվ, Շիրակացու տոմարագիտության, ինչպես նաև դասական ու միջնադարյան փիլիսոփայության մեջ փիլիսոփայական տեսանկյունից ժամանակի էության վերաբերյալ հարցերն անպատասխան են մնում:

XIX–XX դդ. փիլիսոփաները, ինչպես նկատում էր Օսվալդ Շպենգլերը, «... լավ տիրապետում էին ճշգրիտ ժամանակագրությանը, տոմարային հաշվարկին, ունեին հավերժության և տվյալ պահի աննշանության ուժեղ զգացողություն, որը դրսևորվում էր համաստեղությունների վեհաշուք դիտարկմամբ և հսկայական ժամանակաշրջանների ճշգրիտ չափումներով, բայց ներքուստ նրանք դեռ չէին ըմբռնել դրանցից որևէ մեկը»[29]: Իր հերթին՝ հայտնի աստղագետ Ն. Իդելսոնը ցույց է տալիս, որ «օրացույցի խնդիրն է՝ բացատրել անընդհատ ընթացող օրերի հաշվարկման ամենահարմար մեթոդները, չափել համեմատաբար երկար ժամանակաշրջաններ, երբ բավականին բարձր մշակութային մակարդակում գիտակցված կարիք է առաջանում պարզելու՝ երբ է տեղի ունեցել այս կամ այն իրադարձությունը, որքան ժամանակ է անցել դրանից հետո, և երբ է տեղի ունենալու ինչ-որ երևույթ»[30]:

Այսպիսով՝ միջնադարյան գիտնականները օրացույցի կազմումը կապում էին գործնական (կրոնական տոների ամսաթվերի, քաղաքացիական կարիքների սահմանումը և այլն) և աստղագիտական ասպեկտների, այլ ոչ թե փիլիսոփայության հետ՝ բառի բուն իմաստով:

Ժամանակի ընկալումը «Զատկի ճառը» աշխատության մեջ

«Զատկի ճառը» աշխատության մեջ Շիրակացին սահմանափակվել է Զատկի տոնակատարության ժամանակի և տոնի ձևավորման պատմության քննարկմամբ նաև Զատկի ճշգրիտ հաշվարկների մեջ[31]: Նա Սուրբ Զատիկի մասին ասում է հետևյալը. «Զսուրբ տոն Զատիկիս հաստատեաց Տեր ի վերայ Լուսնի ... Հայաստանեացս առաւել ճշմարտապէս անունի Զատիկ Տեառն, այսինքն զատուցեալ յամենային հեթանոսանաց և հրէականաց տաւնից»[32]: Այնուամենայնիվ, «Զատկի ճառում» առկա է տոմարի սուրբ նկարագրության գաղափար, որը Շիրակացին վերցրել է Հին Կտակարանի ավանդույթից և

---

[28] Аристотель. 1984. 12, 220 b 1–5.

[29] Шпенглер. 1993, 136.

[30] Идельсон. 1925, 3.

[31] *Էյնաթյան. 2015, 6:*

[32] *Աբրահամյան. 1979, 290–297:*

զարգացրել քրիստոնեական Զատիկի հաշվարկի հիման վրա: Նա մեկ համար է վերցնում Հին Կտակարանից՝ Ծննդոց Ա: 14. «Եւ Աստուած ասեց. լուսաւորներ լինին երկնքի հաստատութիւնումը, որ ցերեկը գիշերից բաժանեն, եւ նշաններ եւ ի ժամանակների, եւ օրերի եւ տարիների համար լինին»: Հղում է նաև Ելից ԱԶ-ին. «Այս ամիսը ձեզ համար ամիսների սկիզբը կլինի: Ձեզ համար այն տարվա ամիսների մեջ առաջինը կլինի»[33]: Ժամանակի սրբացումն Շիրակացու զատկական հաշվարկում հետաքրքիր ֆենոմենոլոգիական ուսումնասիրություն է ժամանակի ընկալման կրոնական համատեքստում: Քրիստոնեական ավանդույթի շրջանակներում, որին նա հետևում է, Զատկի հաշվարկը ժամանակը վերածում է սուրբ առարկայի՝ արտացոլելով ոչ միայն պատմական և աստղագիտական չափումներ, այլև մեծ խորհրդանշական իմաստ: Տոնի ընթացքում հասարակությունը համախմբվում էր գլխավոր գաղափարների շուրջ՝ համընդհանուրի սրբազան արժեքների զգացում, առասպելական ժամանակներում գիտակցության տարանջատում առօրյա իրականությունից և այլն[34]:

Գարնան առաջին լիալուսնից հետո առաջին կիրակի օրը Զատկի տոնի կրոնական դրվածքը ստեղծում է ժամանակի յուրահատուկ դինամիկա, որը համատեղում է տարերքի բնական փուլերը կրոնական մեկնաբանության հետ: Ժամանակի այսպիսի սրբացումն ընդգծում է Հիսուս Քրիստոսի հարության հետ կապված պատմական իրադարձությունների կարևորությունը և դրանց մեջ ներմուծում սրբության չափանիշ: Թեև Շիրակացին զատկական հաշվարկում ժամանակի սրբացման խոր փիլիսոփայական վերլուծություն չի ներկայացնում, այնուամենայնիվ, կատարելով ճշգրիտ տոմարային հաշվարկներ՝ ներկայացնում է քրիստոնեական եկեղեցու տոմարային համակարգերի և կրոնական ավանդույթների էվոլյուցիան:

Այսուհանդերձ, այստեղ Շիրակացին ժամանակը դիտարկում է ոչ միայն իրադարձությունների օբյեկտիվ հաջորդականություն, այլև որպես անդրանցական (transcendental) *հարթություն, որն ընդգրկում է մարդկային փորձը և այն կապում աստվածայինի հետ: Այս տեսանկյունից Զատկի հաշվարկը կամուրջ է դառնում մարդկային և աստվածային ժամանակի միջև՝ արտացոլելով խոր ձգտում դեպի հոգևորն ու հավերժականը՝ ժամանակի ոսպնյակի միջոցով:*

Ժամանակի ընկալումը «Հայտնության ճառը» աշխատության մեջ

Շիրակացու՝ Մեր Տիրոջ և Փրկչի «Հայտնության առթիվ» աշխատության մեջ Շիրակացին Հայոց եկեղեցու կողմից Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնը նույն օրը նշելու մասին բանավեճում պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել Աստծո կողմից Հին Կտակարանում փուլային տոնների, մասնավորապես՝ յոթերորդ օրվա անցկացման կանոնների սահմանմանը, և մեջբերում է անում Աստվածաշնչից. «Հիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո բոլոր գործերը: Յոթներորդ օրը քո տեր Աստծու շաբաթ օրն է» (Ելք Ի: 8–10)[35]: Նշյալը վկայում է Շիրակացու խոր իմացությունը կրոնական աշխարհայացքի և ռաբի-

[33] *Աստվածաշունչ. 2015, 5, 79:*
[34] *Մ կ ր տ չ յ ա ն. 2016, 9:*
[35] *Աստվածաշունչ. 2015, 84:*

նական հուդայականության մեկնաբանման ավանդույթների մասին, որոնց ներկայացուցիչներին նա անվանել է «Եբրայեցի վարդապետներ»[36]: Թորայում յոթերորդ օրը՝ Շաբաթը, միակ տոնն է, որը որևէ կերպ կախված չէ լուսնի փուլերից. այն չի որոշվում բնության մեջ որևէ իրադարձությամբ, այլ բնութագրվում է արարման ակտով: Նա օժտված էր שבת (կոդեշ՝ ընդգծված, սուրբ – Ա. Շ.) բառով: Ականավոր հրեա աստվածաբան Աբրահամ Հեշելը պնդում է. «Ստեղծագործությունների վերջում օգտագործված «կոդեշ» բառն Աստվածաշնչի ամենանշանավոր բառն է. այն դարձավ պատմության մեջ առաջին սուրբ բառը, որտեղ տարածության մեջ գտնվող որևէ առարկայի հիշատակում չկա. այն վերաբերում է ժամանակին»[37]:

Եզրակացություն

Վերլուծելով Շիրակացու փիլիսոփայական և կրոնական հայացքները կարելի է եզրակացնել, որ գիտնականի աշխատություններում ժամանակի ընկալման փիլիսոփայությունը չի դիտարկվել որպես առանձին գիտություն. հետևաբար թույլ է արտահայտված: Դա բացատրվում է դասական անտիկ փիլիսոփայության ազդեցությամբ, որը երբեք չի դիտարկել ժամանակը փուլից մեկուսացված և ֆիզիկայի մեջ որպես միավոր: Վաղ միջնադարյան հայ միտքը քննելիս պետք է հասկանալ, որ եթե ժամանակը որևէ կերպ հայեցակարգված էր, ապա դա միայն կրոնի հետ միասնության մեջ էր. այսպիսով, դա չպետք է դիտարկենք որպես ժամանակի հերմենևտիկայի նկատմամբ ինչ-որ անուշադրություն: Միայն «Նոր ժամանակի» դարաշրջանում է շարժման միտումը ուժեղ դիրք գրավում: Արևելյան քրիստոնեական ավանդույթը հանդարտ, փակ, սառեցված հակաթեզ էր՝ աստվածային գործողությամբ հենց կենտրոնում[38]:

Չնայած Շիրակացին չի գործածում «անձնական ժամանակ» հասկացությունն այն իմաստով, որով դարեր անց այն կընութագրեն Նոր դարաշրջանի և պոստմոդեռնիզմի փիլիսոփաները, այնուամենայնիվ, արդեն իսկ ի հայտ են գալիս սեփականը ինչ-որ վեհության հակադրելու նախադրյալներ: Ի վերջո, եթե անտիկ աշխարհը հիմնված էր ժամանակի փուլային հայեցակարգի վրա, ապա քրիստոնեական ընկալմամբ՝ գծային, պատմական ժամանակն անձնական վախճանաբանությամբ, հոգին փրկելու մտքով, ծնեց համընդհանուր վախճանաբանության և տիեզերքի վերջավորության գաղափարը: Հենց ժամանակի գծային ընկալումը, աշխարհի ճակատագրի և վերջին օրերի ուսմունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ կրոնական գիտակցության շրջանակներում գտնվող պատմության կրոնական հայեցակարգ, որը նպաստել է այս հիմնարար հարցերն աստվածաբանության ոլորտից գիտության ոլորտ տեղափոխելուն:

Այսպիսով՝ հերքելով ժամանակի անտիկ ընկալման ստատիկ բնույթը, քաղդեացի գուշակներին բնորոշ՝ երեխայի ծննդյան պահի հաշվարկի կարևորությունը, դրանով իսկ արդեն VII դարում Շիրակացին հաջողել է սահմանել «անտիկ ակնթարթի ողբերգությունը»[39], ամբողջովին ամփոփված ներկա պահի մեջ, որտեղ ոչինչ չի հիշեցնում անցյալի ու ապագայի մասին: Հայ փիլիսո-

---

[36] Աբրահամյան. 1979, 162:

[37] Heshel. 1951, 12.

[38] Шпенглер. 1993, 149.

[39] Шпенглер. 1993, 288.

փան կարողացել է ցույց տալ պատմության կյանքի ուղու զարգացումը՝ օգտագործելով մարդու ճակատագրի աստվածային ծրագրի օրինակը:

Արուսյակ Շիրինյան – ԵՊՀ-ի Աստվածաբանական և Հայ եկեղեցու պատմության ամբիոնի հայցորդ, դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ փիլիսոփայություն, հայ հոգևոր գրականության պատմություն, ժամանակի հերմենևտիկա: Հեղինակ է 1 գրքի և 1 հոդվածի:
ORCID: 0009-0000-5022-6882. arusyak.shirinyan@ysu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. 1979, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 401 էջ:

Արևշատյան Ս. 2014, Հայ միջնադարյան փիլիսոփայություն, Մաս Ա, Հին շրջան և վաղ շրջան, Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ., 617էջ:

Աստվածաշունչ Մատեան. 2015, Մայր Աթոռ Ս. Էջմիածին Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 352 էջ:

Էյնաթյան Ձ. 2015, Տիեզերագիտության և տոմարի մեկնություն, Երևան, «Նաիրի» հրատ., 409 էջ:

Շիրակացի Ա. 2005, Մատենագիրք Հայոց, հ. Դ., է դար, Անթիլիաս–Լիբանան, էջ 587–791:

Մկրտչյան Ս. 2016, Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 402 էջ:

Аревшатян С. 2023, Избранные переводы с древнеармянского. Изд. Подг., Г. Мурадян. Ереван, Изд. Матенадарана, 400 с.

Амстронг А. 2006, Истоки христианского богословия, Введение в античную философию. СПб., Изд. Олега Бышко, 258 с.

Аристотель 1981, О небе. – Соб. соч. Аристотеля в 4-х томах, т. 3. М., «Мысль», 613 с.

Аристотель 1984, Физика. – Аристотель. Соч. в 4-х тт. т. 4. М., «Мысль», 1056 с.

Асмус В. 1976, Античная философия, М., «Высшая школа», 544 с.

Гайденко П. 2006, Время. Длительность. Вечность. М., «Прогресс-Традиция», 464 с.

Диалоги Платона Тимэй (или о природе вещей) и Критий. 1883, Перевод с примечаниями и введением Малеванского Г. Киев, Типография Г. Т. Корчак-Навицкого, 310 с.

Идельсон Н. 1925, История календаря. Л., «Научное книгопроизводство», 190 с.

Канке В. 2014, Методология научного познания. М., «Омега-Л», 255 с.

Кимилев Ю. 2014, Западная метафизика конца XX – начала XXI века. Аналитический обзор. М., «ИНИОН РАН», 96 с.

Мамардашвили М. 1992, Как я понимаю философию. М., Изд. группа «Прогресс», «Культура», 418 с.

Платон. 1994, Филеб. Платон. – Собр. соч., в 4 т. М., «Мысль», т. 3, 100 с.

Чалоян В. 1959, История армянской философии. Ереван, Изд. АН Арм ССР, 374 с.

Шпенглер О. 1993, Закат Европы. М., «Мысль», 656 с.

Щедровицкий Г. 2004, Проблемы логики научного исследования и анализ структуры науки. М., «Путь», 400 с.

Heshel A. J. The Shabbath, Printed in USA, published in 1951 by Farrar Straus and Giroux, p. 12.

Hewsen H. Robert. 1992, The Geography of Ananias of Sirak, (Asxarhac'oyc') The Long and the Short Recensions, Introduction, Translation and Commentary, DR. LUDWIG REICHERT VERLAG WIESBADEN, 501 p.

Lewis D. 1986, On the Plurality of Worlds, Blackwell Publishing, 280 p.

ВОСПРИЯТИЕ ВРЕМЕНИ В ТРУДАХ АНАНИИ ШИРАКАЦИ

АРУСЯК ШИРИНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Анания Ширакаци, философия, вечность, бесконечность, время, метафизика.

Восприятие времени в философии армянского мыслителя VII века Анании Ширакаци имело свои особенности, и его рассмотрение не всегда было подробным или систематизированным, по сравнению с более поздними философскими традициями. Концепции времени Ширакаци можно усмотреть в размышлениях о бесконечности и конечности, в полемике со «злыми языческими» философами и халдейскими астрологами. Категории времени в философии армянского философа обнаруживаются в контексте метафизики, важным компонентом которой было понимание времени философии Аристотеля. Философская наука эпохи Ширакаци не обладала достаточными средствами объяснения феномена времени и по большей части была сопряжена с познавательными процессами и использованием инструментариев научного знания тех времен, тем не менее, существует возможность методологических и эмпирических предпосылок для разгадки этого сложного феномена. Анализ философско-религиозных воззрений А. Ширакаци на природу и свойства времени дает возможность исследовать темпоральную концепцию философа.

Арусяк Ширинян – соискатель, преподаватель ЕГУ. Научные интересы: философия, история армянской духовной литературы, герменевтика времени. Автор 1 книги и 1 статьи. ORCID:0009-0000-5022-6882.
arusyak.shirinyan@ysu.am

PERCEPTION OF TIME IN THE WORKS OF ANANIA SHIRAKATSI

ARUSYAK SHIRINYAN

S u m m a r y

Keywords: Anania Shirakatsi, philosophy, infinity, eternity, time, metaphysics.

In philosophy, A. Shirakatsi's perception of time had its own characteristics, and his consideration was not always detailed or systematized, compared to the later philosophical traditions. A. Shirakatsi's concepts of time can be seen in his reflections on infinity and finitude, in polemics with "evil pagan" philosophers and Chaldean astrologers. The categories of time in the philosophy of the Armenian philosopher are found in the context of metaphysics, an important component of which was the understanding of time in Aristotle's philosophy. The philosophical science of that era did not have sufficient means of explaining the phenomenon of time and for the most part was associated with cognitive processes and the use of tools of scientific knowledge of those times. However, there is a possibility of methodological and empirical prerequisites for unraveling this complex phenomenon. Analysis of the philosophical and religious views of A. Shirakatsi on the nature and properties of time makes it possible to explore the philosopher's temporal concept.

Arusyak Shirinyan – Applicant at YSU, lecturer of YSU. Scientific interests: philosophy, history of Armenian spiritual literature, hermeneutics of time. Author of 1 book and 1 article. ORCID:0009-0000-5022-6882.
arusyak. shirinyan@ysu.am

Պատմագրական տեղեկագիր • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 3